

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետի  
գիտական խորհրդի 11.12.18թ. կայացած թիվ 6.18-19 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 36 անդամներից 24-ը:

### **Հաստատվեց հետևյալ օրակարգը՝**

1. Ընդհանուր ֆիզիկայի, մոլեկուլային ֆիզիկայի, տեսական ֆիզիկայի և օպտիկայի ամբիոնների վարիչների ընտրություններ:
2. Ընթացիկ Հարցեր:

Նիստը վարեց ֆիզիկայի ֆակուլտետի դեկան, պրոֆ. Ռ. Հակոբյանը:

**Լսեցին՝** ամբիոնների վարիչների պաշտոնի թեկնածուների քննարկման հարցը:

4 ամբիոնների վարիչների թեկնածուներին ներկայացնելու և կարծիք հայտնելու համար **ելույթ ունեցավ** մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Կիրակոսյանը: Նա ներկայացրեց բոլոր ամբիոնների վարիչների թեկնածուների տվյալները և արտահայտեց մրցութային հանձնաժողովի դրական կարծիքը բոլոր 4 թեկնածուների վերաբերյալ: Այնուհետև իրենց ծրագրերը ներկայացնելու համար խոսք տրվեց ամբիոնի վարիչների թեկնածուներին:

**Ելույթ ունեցավ** օպտիկայի ամբիոնի վարիչի թեկնածու **Ռ. Ալավերդյանը**: Իր խոսքում նա նշեց, որ շարունակելու է այն աշխատանքները, որ ընթանում են ամբիոնում և առանձնացրեց մի քանի կետ, որը առաջնային են իր համար.

1. Ուսումնական ծրագրերի վերանայումն ու արդիականացումը:
2. Բարոյապես և ֆիզիկապես մաշված լաբորատոր փորձերի, ինչպես նաև համապատասխան ձեռնարկների թարմացումը:
3. Կարդացվող դասախոսությունների էլեկտրոնային տարբերակների ստեղծումը:
4. Մագիստրոսական աշխատանքների որակի բարելավումը:
5. Ուսումնական պրոցեսում երիտասարդ դասախոսների ներգրավումը:

**Ելույթ ունեցավ** ընդհանուր ֆիզիկայի ամբիոնի վարիչի թեկնածու **Ա. Գևորգյանը**, ով ամբիոնում ընթացող աշխատանքներից կարևորեց լաբորատոր աշխատանքների ձեռնարկների արդիականացումը, որը արդեն իսկ ընթացքի մեջ է, և նախատեսվում է

շարունակել և ավարտին հասցնել, իչպես նաև դասախոսությունների թեմաների վերանայումը, և դասախոսությունների էլեկտրոնային տարբերակների ստեղծումը:

**Ելույթ ունեցավ** մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի վարիչի թեկնածու **Ե. Դայլանը**, ով իր խոսքում նշեց, որ շատ կարևոր է պահպանել այն ձեռքբերումները, որոնք արդեն իսկ ամբիոնն ունի: Իսկ դրա համար շատ կարևոր է լուծել սերնդափոխության հարցը: Ե. Դայլանն ասաց, որ մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնում հիմնականում զբաղվում են կենսաբանական օբյեկտների ուսումնասիրությամբ: Հատկապես խորացել են ուսումնասիրությունները հակաուռուցքային միջոցների մշակման ուղղությամբ: Այս փուլում տիկին Դայլանը կարևորեց համագործակցությունը քիմիկոսների հետ՝ ավելի արդյունավետ հակաուռուցքային դեղամիջոցներ ստեղծելու համար: Գիտական ուղղություններից Ե. Դայլանն առանձնացրեց նաև կենսաբանական մոլեկուլների կառուցվածքի վրա ճառաքայթման ազդեցության ուսումնասիրությունը, որը զարգացվում է ամբիոնում CANDEL q/h ինստիտուտի հետ համատեղ:

**Ելույթ ունեցավ** տեսական ֆիզիկայի ամբիոնի վարիչի թեկնածու **Ա. Սահարյանը**: Նա իր խոսքում շնորհակալություն հայտնեց ամբիոնի անձնակազմին իրեն ցուցաբերած մեծ վստահության համար: Նա նշեց, որ իր համար պատիվ է շարունակել իր ուսուցիչների գործը: Ամբիոնում նախատեսվող աշխատանքներից պրոֆ. Սահարյանը առանձնացրեց կարդացվող դասընթացների արդիականացումը: Բացի դրանից նա նշեց, որ ամբիոնն ունի սերտ կապեր արտասահմանյան և տեղական այլ գիտական կենտրոնների հետ, ինչի շնորհիվ նախատեսվում է շատացնել համատեղ աշխատանքները, որոնք կնպաստեն ամբիոնի հետագա զարգացմանը: Բացի դրանից, նշեց նոր գիտական ուղղությունների զարգացման անհրաժեշտությունը տեսական ֆիզիկայի ամբիոնում:

Նախագահ **Ռ. Հակոբյանը** գիտխորհրդի անդամներին ներկայացրեց քվեարկության կարգը: Փակ, գաղտնի քվեարկություն անցկացնելու նպատակով գիտխորհրդի որոշմամբ կազմվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝

1. Մաքսիմ Սարգսյան (նախագահ)
2. Վալերի Հարությունյան
3. Գոհար Հովհաննիսյան:

Հաշվիչ հանձնաժողովը գիտխորհրդի անդամներին բաժանեց մեկական քվեաթերթիկ: Քվեարկության ավարտից հետո հաշվիչ հանձնաժողովն ամփոփեց արդյունքները և կազմեց համապատասխան արձանագրությունները: Որից հետո հայտարարվեցին ընտրությունների արդյունքները:

Քվեատուփում առկա էին 24, անվավեր քվեաթերթիկ չկար: Փակ, գաղտնի քվեարկության արդյունքում օպտիկայի ամբիոնի վարիչ է ընտրվել Ռ. Ալավերդյանը՝ 23 կողմ և 1 դեմ ձայներով, ընդհանուր ֆիզիկայի ամբիոնի վարիչ է ընտրվել Ա. Գևորգյանը՝ 21 կողմ և 3 դեմ ձայներով, մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի վարիչ է ընտրվել Ե. Դալյանը՝ 22 կողմ և 2 դեմ ձայներով, տեսական ֆիզիկայի ամբիոնի վարիչ է ընտրվել Ա. Սահարյանը՝ 22 կողմ և 2 դեմ ձայներով:

**Որոշեցին՝** օպտիկայի ամբիոնի վարիչ է ընտրել Ռ. Ալավերդյանին: Ընդհանուր ֆիզիկայի ամբիոնի վարիչ է ընտրվել Ա. Գևորգյանին: Մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի վարիչ է ընտրվել Ե. Դալյանին: Տեսական ֆիզիկայի ամբիոնի վարիչ է ընտրվել Ա. Սահարյանին: Ընտրությունների արդյունքներն ընդունվեցին միաձայն:

### **Ընթացիկ հարցերում**

**Ելույթ ունեցավ՝** ֆակուլտետի դեկան Ռ. Հակոբյանը, ով ներկայացրեց մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի կողմից ներկայացված Վիգեն Բարխուդարյանի «Մոլեկուլների կառուցվածքը և հատկությունները» ուսումնական ձեռնարկը: Նա նշեց, որ ստացվել է ֆիզիկայի ֆակուլտետի մեթոդական խորհրդի եզրակացությունը վերոհիշյալ ձեռնարկը ուսումնական ծրագրերում ընդգրկելու նպատակահարմարության մասին: Նշվեց, որ ձեռնարկի վերաբերյալ ֆակուլտետի մեթոդական խորհուրդը ստացել է երկու դրական եզրակացություններ գրախոսների կողմից:

**Որոշեցին՝** Երաշխավորել վերը նշված ձեռնարկի տպագրությունը և ընդգրկումը ուսումնական գործընթացում՝ որպես դասավանդվող համանուն առարկայի համար հիմնական ձեռնարկ:

**Ելույթ ունեցավ՝** ֆակուլտետի դեկան Ռ. Հակոբյանը, ով ներկայացրեց ընդհանուր ֆիզիկայի ամբիոնի կողմից ներկայացված «Մոլեկուլային ֆիզիկա: Լաբորատոր պարապմունքների ուղեցույց» աշխատանքը, հեղ.՝ Ա.Մ. Մուրադյան, Դ.Հ. Բադալյան, Ռ.Ց. Գաբրիելյան, Մ.Վ. Հայրապետյան, Լ.Ա. Հովհաննիսյան, որպես ուսումնական

ձեռնարկ բնագիտական ֆակուլտետներում դասավանդվող «Ֆիզիկա» անվանմամբ բակալավրական առարկայի լաբորատոր փորձերի ուղեցույց ընդգրկելու նպատակահարմարության հարցը: Նա նշեց, որ ստացվել է ֆիզիկայի ֆակուլտետի մեթոդական խորհրդի եզրակացությունը վերոհիշյալ ձեռնարկը ուսումնական ծրագրերում ընդգրկելու նպատակահարմարության մասին: Նշվեց, որ ձեռնարկի վերաբերյալ ֆակուլտետի մեթոդական խորհուրդը ստացել է երկու դրական եզրակացություններ գրախոսների կողմից:

**Որոշեցին՝** Երաշխավորել վերը նշված ձեռնարկի տպագրությունը և ընդգրկումը ուսումնական գործընթացում՝ որպես վերոհիշյալ առարկայի համար հիմնական մեթոդական ուղեցույց:

Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան՝

Ռ.Ս. Հակոբյան

Խորհրդի քարտուղար՝

Շ.Ա. Տոնոյան